

## Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

1

Իշեւանին մէջ այս ինքիննքը խորք կը զգամ ես այլեւս,  
Երեկ ես տէրն էի անոք, այսօր օտար եմ կարծես,  
Ծանօթները՝ մէկիկ-մէկիկ անվերադարձ կը մեկնին,  
Նորեկները ինժ' անձանօթ' անհաղորդ եմ անոնց ես:

2

Ըսի, իմաստն այս անսահման, այս հունաւոր  
Տիեզերքին, զրտնեմ զուցէ իրերուն խորն,  
Ու առզուեցայ ես անոնց մէջ, տեսայ սակայն  
Որ մակերեսը աւելի է լուսաւոր:

3

Երեկուան Ծառը չէ այս ծառը,  
Ոչ ժայռը, ոչ պարիսպը այս հասա.  
Երեկուան բառը չէ այս բառը,  
Տարրեր է այսօր իր իմաստն:

4

Երէ նիշդ է թէ այս կեանքը չունի իմաստ, նըպատակ.  
Մնապաւէն՝ լըգուած ենք մենք եզրին Վիհի մ' անյատակ.  
Ճըշմարտութիւնն այդ թռող քեզի մընայ, չունիմ պէտք իրեն,  
Ես պատրանքի օրօններով կ'ուզեմ ոք կեանքս օրօնն:

5

Ամին եկող պիտի այրի, պիտի այրի մոխրանայ,  
Մսիրին մէջ՝ ծառ-ծաղկի սերմեր պիտի ծրին ու մեծնան.  
Շառի շուրին նորեկները պիտ Պատրանէներ օրօնն,  
Շաղիկներու բոյրով պիտի արքենան:

6

Երբ ուրիշներն կը պարէին՝ հակած էիր գիրքերին,  
Որ լուծէիր Տիեզերքի, Կեանքի խորհուրդը խորին.  
Ի՞նչ է իմաստն այս աւաշին, ափսոսանքին տարածամ,  
Անցեալի սխալն անուղղելի, ժամնակի ձեռքն է դաժան:

7

Ինչ որ առիր, ետ տուր նորէն, ո՞վ ժամանակ.  
Ետ տուր սըրտիս թեւերն նորէն, հեղ մալ հախրեն  
Անհունին մէջ. սեւի փոխի մազն այս ներմակ.  
Կեանքս ալ ուզես կը նըլիրեմ ես փոխարէն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ